ների շուրջ ալիքների պսակներ հիւսում, մեծ հողամասերի ափերին տատանուող սաւաններ փռում, բիւրեղ դառնում բեւեռների մօտ եւ արեւի գրկի մէջ թաւալւում:

Հսկայ հողամասերը եռուն արիւններով երակներ ունին, ջրերի եւ կրակների հոսանքներ, գաղտնի ճառագայթներով կապուած, ո՞վ գիտէ, տարածութիւնների մէջ կորած ինչպիսի աշխարհների հետ:

Աստղերի ներդաշնակութիւնը, կապոյտ, կանանչ, լազուր, կարմիր, միլիոնաւոր մղոնների ծայրին: Ահագին լոյսերի խուժումը ցցուած պարապների կատարին եւ տիեզերքի պայթող սիրտը բոցագեղ մոլորակների շրջապարի մէջ:

Ամէն ինչ իմաստ է եւ ճարտարապետութիւն: Ամէն ինչ հաղորդակից է, երկրաչափական ձեւ, երաժշտական կառուցում, սերմերով լեցուած ռումբ, անտեսանելի կապակցութիւն: Տիեզերքը չունչ է առնում վարդի կոկոնի աճման հետ եւ Բերլինդեան ծովում խուժող ալիքների հետ: Գիսաւոր աստղերի լոյսին է տենչում Նենուֆարը եւ Նիագարան հետապնդում է երկրագնդի սրտում թաքնուած ուժերին:

Մեծ բնաղդ: Աստուածաշնչի առաջին տողերի նման պարզ: Բոցավառ ռիթմականութիւն:

Իսկ մե՛նք՝ մենք կորցրել ենք տիեզերական բնաղդը, երաժշտական իմաստը եւ բարձրացել ժայռերի գագաթը:

Պատմութիւնը դուրս է նետուել գերագոյն կշռոյթի բովից, եւ թաւալւում է պարապի մէջ:

Միտքը պարում է իմացականութեան դանակների վրայ, եւ կեանքը ոչնչանում է հրաշալի մի մեքենայի անթիւ անիւների տակ:

18-րդ եւրոպական դարը սուր եռանկիւնի նման մխրճուել է լինելիութեան սրտին: Կարաւանը կորցրել է իր գանձը եւ խենթացած ուղտերը փախչում են դէպի անապատների կրկներեւոյթները:

19-րդ դարը, 20-րդ դարը աւազների մէջ հինաւուրց գերեզմաններ են որոնում եւ կըրաղիւսէ չինուած ծառերի վրայից էութեան պտուղներ քաղում:

Վերդէօնի թնդանօթների ոռնոցի տակ Մանքրեդը իր ամենայոռետես տողերն է արտասանում, Վիլիամ Բլէկը մեռնում է եւ Նիցշէն վաղուց խենթացել է: Մինչդեռ Նիւ Եորքի վաճառականը, բարձրարարձր տների կատարին, էդգար Պօի բիւրեղեայ տողերի վրայ թուանշաններ է շարում, Մարնը՝ ծովերին հազարաւոր դիակներ է ղրկում, եւ Արաքսը արիւնի տակ անհետանում:

Նոր մարդկութեան գիտակցութեան մէջ բեւեռները բախուել են: Բնութիւնը եւ իրերը անջատուել են: Աստուած երերում է իր խաչի վրայ, եւ առաքեալները գնդացիրների տակ մահացել են:

Լամանչը: Իր արիւնոտ թեւերն է կարկառել Հռենոսի եւ Դարդանելի ջուրերին: Արարատի ստորոտին ժողովուրդներ են անհետանում եւ Մոսկուան, կարմիր բոցերի մէջ, կողոպուտի է ձեռնարկել յանուն մարդկութեան:

Մարդիկ փխրուն ճենապակիի պէս փշրուում են եւ քաղաքները ռումբերի տակ հնձուում:

Նաւերից դուրս նետուած ամբոխների նըման, ամբողջ ժողովուրդներ, մարած փարոսների աշտարակների վրայից սարսափ են ծամում եւ ահաւոր տեսիլներ դիտում:

Բրազիլիոյ ձեռքերը դողում են, Ամազոնը իր ափերի մօտ կանգ է առնում, Կոնգոն սեւ հրեշտակների երամ է բաց թողել եւ Փոքր Ասիան, խենթացած բորենու նման փորում է Անիի քարերը:

Մտածե՛լ... Էրզրումից մինչեւ Մուշ, մինչեւ Վան, մինչեւ Էջմիածին արիւնաթաթախ մանրանկարները ճանապարհները լեցրել են բիւզանդական բազմութիւններով եւ օդի մէջ եռանկիւնի աստղեր են պայթում: Կարսում՝ ոտաբոբիկ հայ գինուորներ քառասուն աստիճան ցուրտին սառոյցէ դիակներ են մատուցում եւ հրացանները լեցնում Աւետարանի խօսքերով:

Պրագմատիստ փիլիսոփայութիւնը չրջան է, չրջանը՝ անիւ, անիւը՝ մեքենայ, մեքենան՝ Մարթան, որ 60 կիլոմետրից Մինօսեան Վեներայի վրայ կրակ է փսխում:

Հարց է, ի՞նչ է անում Սորբոնում նստած փոքրիկ հրեայ Բերգսոնը:

Ռօտշիլդը տոկոսով փող է բաժանում, փողը գնում է պետութիւնների աղիքների մէջ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան